

Չարց էներգետիկայի բնագավառում գործունեության որ տեսակները կարգավորման ենթակա չեն:

Պատասխան Կարգավորման ենթակա չեն.

1) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները,

2) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 մեգավատտը,

3) մինչև 150 կիլովատտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում,

4) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել-գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը,

5) բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կիլովատտ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում: